

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ¹⁾

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

Կովկասի բազմատարր ժողովրդների թւում համարեա մի ամենաաննշան տեղ են բռնում գնչուներն առհասարակ և սակաւաթիւ հայ բոշաներն մասնաւորապէս։ Այս յօդւածովս ցանկանում ենք ընթերցողին գաղափար տալ նոցա կենցաղավարութեան և առանձնայատկութիւնների մասին առհասարակ։ Մեր յօդւածը վերաբերում է առաւելապէս Ախալքալաքի, Ախալցխայի և Ալեքսանդրապոլի հայ բոշաներին, որոնք 1828-ին հոչակաւոր կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ Բարձր-Հայքից գաղթեցին դէպի Ռուսաստանի նոր տիրած սահմանները։ Դոցա թիւը ճշդութեամբ մեզ յայտնի չէ. և դժւար թէ մէկը կարողանայ նոցա սոոյզ թիւը իմանալ, քանի որ բոշաները իրանց կենցաղավարութիւնով, իրանց թափառական նիստ ու կացով միշտ խուսափում են կանոնաւոր վիճակագրութիւնից։ Նոցա թիւը մօտաւորապէս այս է. Ախալքալաքում 25 տուն, Ախալցխայում 16 տուն, Ալեքսանդրապոլում 40 տուն, Ղարաում 25 տ., Ախալքալաքի գաւառի Եխտելա գիւղում 8 տուն., Մալհայի վիճակի Դամալայ գիւղում 20 տուն, նոյն վի-

1) «Բոշա» բառը էրզրումի բարբառով արւում է գնչուների ան ցեղին, որը կրօնով լուսաւորչական է և խօսում է մեծ մասամբ հակերէն. անպէս որ բոլոր ավակրօն գնչուները միշտ կրում են ալ անուններ, ինչպէս «Պարաչի», «Պճչուա», «Ժիգան» և ալն. մինչդեռ. օր. Ղարաբաղի բարբառով սրոշառ բառը ընդհանուր է բոլոր գնչուներին. Համեմատեցէք բոշաների մասին Մուրճ. 1890 թ. № 9 - Բոչաները ըստ Կոլոչիի (Յօդ. Ա. Արասխաննեանցի) և Խաթ-Սարա, վլու և. Փափաղեանի 1890, № 9 և 10:

ճակի Նպալքիլիսէ գիւղում և տունն Աւելի մեծ թւով և հին անփոփոխ աստանդական կեանքով ապրող բոշաներ կան վերջին պատերազմով նւաճած երկիրներում, առաւելապէս Աջարայի Փանէկ և Փարտուղ կոչւած զաւ առներում: Այս վերջիններիս թիւը դէմ մօտաւորապէս չեմ կարող զնել, դորա մասին տեղեկանալու հաստատ ազբիւր չ'ունենալով: Երևանում և Գանձակում ևս մի ժամանակ եղել են սակաւաթիւ բոշաներ, բայց թողնելով իրանց պարապ-մունքը բոլորովին մոռացել և խառնել են տեղացի հայերի հետ Կովկասի սահմաններում վերոնշեալներն են այն տեղերը, որտեղ բնակ-ւում են հայ բոշաներ: Նոցա մեծագոյն մասը ապրում է Տաճկա-Հա-յաստանում, գլխաւորապէս Սինոպի և Թոխաթի (Եւղոկիայ) կողմերը:

I

Հայ-բոշաները, չը նացելով իրանց խիստ սահմանափակ քա-նակութեանը, իրանց կրօնին՝ ու խմուած գործածած լեզւին, որ միւնոյնն են ինչ որ մեր լեզուն և կրօնը և որոնց պատճառով ոմանք նոցա հայ-բոշա են անւանում, բայց այդ ժողովուրդը իրան միայն յատուկ սպիրութիւններով և բնաւորութիւնով մի զարմա-նալի ինքնատիպ, ինքնուրոյն ժողովուրդ է, օժտած ուշադրու-թեան արժանի օտարութիւններով:

Հայ բոշայի աղնիւ յատկութիւնները աւելի աչքի են ընկնում և կշիռ են ստանում մանաւանդ եթէ նոցա համեմատելու լինենք ոչ թէ մի նստակեաց և քիչ թէ շատ քաղաքակիրթ ազգի հետ, այլ իւր ցեղակից և համարեա նոյն միջոցներով իւր ապրուատը հայթայթող գնչուի հետ, որ կրօնով մահմետական է: Թէե սոցա կւանքի հանգամանքները, աւանդական պարապմունքը միատեսակ են, թէե ծագումով նոքա պատկանում են միւնոյն ցեղին, բայց հայ բոշան շատ և շատ բարձր է կանգնած թուրք գնչուից:

Մինչ թուրք-գնչուն պատրաստ է յարմար րոպէին առանց առիթը բաց թողնելու թալանել մնած տունը, գողանալ ամեն մի ձեռքը ընկած առարկայ, եթէ նորա այդ գործողութիւնը դիտող չը կայ, հայ-բոշան երբէք, ոչ մի դիպւածում այդպիսի ատորու-թիւն յանձն չի առնի: «Զգողանալը» նորա ցեղի աւանդական և ամենասրբազան պատւերներից մինն է: Երբէք, ոչ մի հանդաման-

Քուր բոշան չի բռնւած գողութեան մէջ. գոնէ ինչքան հետաքըրքրւել ենք, չենք պատահել մէկին, որ մեր ասածի հակառակը պնդէր: «Քոշան գողանալ չը գիտէ» այդ է ժողովրդի այն մասի արմատական կարծիքը, որը յարարերութիւն ունի նոցա հետո: Այդ է պատճառը, որ ոչ մի տեղ արգելւած չէ բոշացի մուտքը. ամեն տան տէր վասահ է նորա շխափութեան վերաց, մինչդեռ ոչ մի զնչու ազատ մուտք չունի տներում:

Թուրք զնչո՞ն աւելի գործնական և խորահանկ է, երբ բանը զալիս է մարդկանցից փող կորզելուն նա խիստ լաւ զիտէ օգտականիկ ժողովրդի մահաւասութիւնից զանազան խարերայութիւններով: Նոցա կանաքը իրանց «Փալք-երով», (հայութիւն) եղունդներին նայելով, վհկութեամբ կամ անբարոյական և դրաւիչ կաքաւով տղբուկի նման ծծում են միամիտ ժողովրդի որիւնքրաինքով վաստակածը: Հայ բոշան բողորովին չը գիտէ գործադրել վերսչեալ թէե ասոր, բայց դիւրին փող կորզելու միջոցներից և ոչ մինը: Նոյն իսկ արտաքին հազուսից կարելի է զատել այս ցեղակից թափառաշը ջիկների առարերութեան և առաւելութեան կամ պահառաթեան աստիճանը. զնչուն կարծես բոլորովին զուրկ է ամօթխածութիւնից և վացելութեան զգացմունքներից. նա շրջում է համարեամ մերկ, առանց քաշելու, մինչդեռ բոշան խիստ խուսափում է մերկութիւնից. նորա հազուսուը թէե հնոտի, ծածկւած անժիւ և բազմագունի կարուանքով, երբէք անվայելու և պատառուսած չէք տեսնի: Ել չենք վիշում բոշաների միւս ներքին բարոյական արժանաւորութիւնները, որոնք մեզ շատ կը հեռացնէին յօդւածիս նպատակից: Սակայն պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ համացեղ և համապարապմունք ժողովրդների մէջ եղած տարբերութիւնը ունի, ինչպէս ամեն բան, իւր պատճառը. նոցանից մինը կրօնով մահմեղական է և այդ կրօնի շնորհիւ զուցէ հնուց ունեցած լաւ յատկութիւնները կորցրած պէտք է միայն յետադիմէր, անպիտանանար, մինչ հայ բոշան, իբրև քրիստոնեաց ժողովուրդ, մշտապէս ապրելով ու շփւելով հայերի հետ, հարկաւ շատ բարձր պիտի լինի առաջինից: Թողնելով սոցա համեմատութեան մանրամասնութիւնները, ևս կ'անցնեմ յօդւածիս բուն նպատակին, հայ բոշացի առանձնակի նկարագրութեանը:

II

Մի ժողովուրդ, որ էի ցանում, չի հնձում, բայց թռչունի պէս ապրում է, որի հայրենիքը աշխարհն է ամբողջապէս, հովանին երկինքը, հարստութիւնը մի աւանակ և մի քանի չուլ ու փալաս,—դա բոշան է: Հպարտ իւր աղքատութեան մէջ, անկախ և ազատասէր առանց որ և է քաջութեան, աշխարհակալ և հարկառու առանց զէնքի և բռնութեան՝ ահա բոշայի աչքի ընկնող յատկութիւնները: Նա վստահ է, որ ամեն տեղ կ'իշխէ, կը տիրապետէ այն մոքով, ինչ մոքով բոշան է հասկանում իշխել և տիրապետել բառերը: Նա գիտէ, հաւատացած է, որ ամենից կ'ստանայ իւր հարկը, ուստի և նա ամեն տեղ է, ամենուրեք է, ուր մարդիկ կան: Սարերն ու ձորերը չեն խափանում նորա ընթացքը, ծովն ու անսպատը արգելք չեն դառնում նորա անընդհատ թափառելուն: Եղանակների յանկարծական փոփոխմանք, անձրև, արև, ձիւն կամ փոթորիկ երկիւղ չեն ազդում նորան: առկունութեամբ յաղթելով բոլոր բնական արգելքներին և սպատահարներին, նա ամառայ կիզիչ տօթին, կամ խիստ ձմեռայ բքերին ուրականի նման երևում ու անցնում է այս կամ այն գաւառը, այս կամ այն նահնանքը:

Չունենալով մասնաւոր, անձնական սեփականութիւն, նա բոլոր աշխարհը, բոլոր մարդկանց ունեցածը իւր սեփականութիւնն է համարում, եթէ նոցա կարիք ունի: Ուստի և սեփականատիրոջ վստահութեամբ անարգել նա մոնում է ամեն մի օտարականի տուն և ըստ երևոյթին արդարացի պահանջով, թէև այդ պահանջը քողարկած է լինում աղերսախառն բառերով և արտայալուում է խնդիրքի ձևով: Բոշան աղքատի նման մուրալ չը գիտէ, այլ նա զիտէ պահանջել խնդիրքի ձևով և վայ նորան, ովոր չի յարգիլ նորա խնդիրը: Կարկտի նման կը թափուի բոշայի բերանից նորա անսպառ կծու և ազդու անէծքը՝ մերժող տան տիրոջ գլխին: Բոշան ապրում է իւր ճարտար լեզւի և ռամիկներին սարսափեցնող ազդու անէծքով!—

Բոշաների մասին խօսելիս դիւրութեան համար պէտք է ճշշտութեամբ որոշել այր և կին բոշայի դրութիւնը, որոնց փոխադարձ յարաբերութիւնը և կացութիւնը մի տարապայման բնութիւն ունի: Բոշա հասարակութեան մէջ, կնոջ դերը յատկացրած է

տղամարդոց և, ընդհակառակը, տղամարդկանց դերը յատկացրած է կանանց, ինչպէս բոշա հասարակութիւնը մի սպառող ոյժէ, մի պարագիտ է ամբողջ մարդկութեան համար, նոյնպէս ի մասնաւորի այլ բոշան մի կատարեալ ձրիակեր է իւր կնոջ վերաբերութեամբ, որի վերայ նա ծանրաբեռնել է բոսութիւնից իրան նշանակած հոգսերն ու աշխատանքը: Վերևը մեր լիշած յատկութիւնների մեծագոյն մասը պէտք է տալ բոշա կնոջ, որին իսկապէս կարելի է իւր ցեղի արժանաւորութիւնների և պահասութիւնների կատարեալ ներկայացուցիչը համարել: Բոշա-ժողովրդի մէջ, տղամարդը մի տեսակ երկրորդական, կրաւոր դեր է կատարում, նա ապրում է իւր կնոջ աշխատանքի փշրանքով, ուստի իւր հասարակութեան գոյութեան խնդրում նորա դիրքը խիստ աննշան է: Բոշայի գոյութեան ապահովողը, նորան պահպանողը բոշա-կանայք են: Ըստանիքի մոնունդը, նորա հազուտոը և մնացած բոլոր առօրեայ չնշին պահանջները հոգացողը, տոկոն, ոչ մի արդելքի և խոչդոտի առաջ չ'երկնչող բոշա-կինն է:

Ինչքան էլ այդ ընտանիքի պահանջները սակաւ լինին, այնուամենայնիւ դոցա բաւականութիւն տալը շատ գժւար է, եթէ աչքի առաջ ունենանք որ նոքա պէտք է լրացւին ոչ թէ մի արդիւնաբերող ձեռնարկութիւնով, ոչ թէ ունեցածը շահեցնելով կամ ցանածը հնձելով, այլ բոլորովին պատահական, այս ու այն տեղից համարեա զօրով կորզած պատառներով: Եւ բոշա-կինը վրան առած այդ ծանր պարտականութիւնը կատարում է զարմանալի տոկունութեամբ, որ հերոսութեան է հասնում: Զրկւած այն բոլոր իրաւոնքներից և քնքշութիւններից որ յատուկ է իւր սեռին, նա բայի վիշեալ ծանր հոգսերը լրացնելուց, որով շատ անշամ կերակրում է 4—8 հոգի՝ հաշւելով ամուսնուն, նորա ծնողներին և իւր երեխաներին, նա իւր աշխատութեան վերջին կոպէկներով հոգում է ամուսնու շռայլութիւնների ծախսը—նորա ծխախոտի — և արագի գինը: Եւ այդ բոլոր ջանքերի համար վայելում է իւր ամուսնուց միայն արհամարհանք:

Ըստանեկան յարկի տակ շատ սակաւ է ապրում բոշա կինը, նա իւր օրերը անցնում է հեռաւոր օտարութեան մէջ, թէև նորա համար ոչ մի տեղ օտար չէ: Այցելում է ամեն մի ազգի, մտնում

է ամեն մի անհատի տուն, սակացն այդ ղէպքում՝ նա միշտ խոտիր է զնում՝ քաղաքի և գիւղի, հարստի և աղքատի մէջ, միշտ առամբութիւնը վերջիններին տալով, որոնցից նա դիւրութեամբ է ստանում՝ իւր աղքատիկ պահանջը:

Մանելով ամեն մի տուն, հազիւ է պատահում, որ նա մոտած տեղից դատարկածեւն դուրս ելնէ: Խափիր չը դնելով ոչ մէկի տւածի մէջ, նա խնդրում է ամեն բան, ինչ որ իրան պէտք կը գայ: Նորա խնդրած բաները լինում են սովորաբար հաց, ալիւր, ցորեն, գարի, կորէկ, բուրդ, շորեր, զանազան կոտրանք, հին կոշիկներ, մածուն, սերուցք (արաժան), իւղ, կարաղ, պանիր, թան և այլն. երբ ամեն բան բացասում են, նա խնդրում է աղ, փայտ, տաշեղ, ուտելու կերակուր... մի խօսքով ամեն բան, որ կարող է ունենալ և տալ տանտէրը: Նորա սուր աչքը տեսնում է տան ամեն անկիւնը, նորա հայեցքից չի խուսափում ոչ մի առարկայ, որ կարող էր իրան պէտքական լինել Եթէ նորա խնդիրը շուտով գոհացում չի ստանում, նա դաւնում է պահանջող: Պէտք է բոշայի հաստատակամութիւն ունենալ, նոցա պահանջածը մերժել կարողանալու համար:

Երկար, առանց ձանձրանալու, հին ու նոր մեռելների լիշտակով, սիրած տղամարդի, անգին զաւակների ևարե—սատազով: Նա աշխատում է փափկացնել կամակոր տանտիկնոջ սիրով և ստանալ «իւր փայը»: Երբ իւր բոլոր հնարագիտութիւնը զուր է անցնում, նա մռնչում է կրծտացնելով իւր աստամերը, և մի խիստ անէծք տալով, անմիջապէս հեռանում է: Սակացն բացարձակ անիծելու համարձակութիւն չունի նա: Նորա խիստ սրամիտ անէծքը միշտ արտայայտում է փոխարերաբար, որով միջոց տալով լաւ ըմբռնելու իւր ասածի խմասոր, նա ժամանակ է վաստակում անվտանգ հեռանալու: Ալլապէս նոցա այդ համարձակ վարմունքը շատ էժան չի նստի նոցա վերայ:

Մի որ և է տուն մտնելիս, բոշան իւր ուզածը սկսում է հաճոյախօս նախաբանով: Նա ճարտար լեզւով աշխատում է գտնել տանտիկնոջ (նկատենք, որ նոցա գործը միշտ կանանց հետ է) թոյլ երակը, որ շատ դժւար չէ, քանի որ նա փորձով լաւ ուսումնասիրել է բազմաթիւ կանանց թոյլ կողմերը: Գովում է տան-ամիկնոջ աւ սիրունիկ աչքերը, նրա ըսունդիկ (գեղեցիկ) քիթն ու-

բերանը, նորա մազերն ու հագուստը, արտաքինից անցնում է ներքին արժանաւորութեան, դովաբանում է նորա ողորմածասիրութիւնը և այլն... Նմէ պատահած կինը ծանօթ է հնոց, կամ ուրիշ տեղից է հարս եկած, նա յօրինում է սուտ բարեներ նորա ծնողներից և բարեկամներից, որով աշխատում է դրաւել նորան: Վայ նորան, ով անձնատուր է լինում բոշացի հաճոյախօսութեան և նոցա հետ մտերմաբար խօսակցում է: Այդ խօսակցութիւնը կամաց, բոլորային աննկատելի կերպով բոշան ուղղում է դէպի իւր նսղատակը և կարծես բնականաբար նորա ամանի մի պատահան մասը տանտիկնոջ ձեռով լցւում է իւրզով կամ սերուցքով, որ բոշացի ամենաձեռնոտու աշխատանքն է:

Միամիտ գիւղացիներին խարող չարչի-մանրավաճառներից յետոյ, իրաւամբ կարելի է ասել, բոշան առաջի տեղն է բանում:

Բոշա կանացք սովորաբար շրջում են զոյդ-զոյդ, առանց աղամարդի առաջնորդութեան:

Հարսներին և մատաղահաս կանանց առաջնորդում է մի փորձած հասակաւոր, կամ մի պառաւ կին: Նատ սակաւ է պատահում, որ բոշա-աղջիկը շրջի բան խնդրելու, այն էլ երբ հասակն առաւ, զաղարում է շրջելուց: Հարսին առաջնորդող պառաւ կամ տարիկն առած կինը լինում է կամ նորա սկեսուրը, բարեկամներից մինը և կամ մօտիկ ծանօթ հարեւանը, որը իրբե մենաոր, նորահարսի ամուսնութիւնից չորս-հինգ ամիս յետոյ, նորա առաջն ընկած ման է ածում գիւղից գիւղ, քաղաքից քաղաքը շրջելու և իւր ապաղայ արւետին վարժեցնելու, որով պիտի հայթացմէ իւր և իւր ամրող ընսանիքի ապրուսոր:

Այդիսի շրջագայութեան ողջ ընթացքում նոցա ուսերից մշտապէս կախած են լինում միշտ մի կամ երկու ահազին կաշեայ պարկեր, որոնց մէջ ածում են ստացած իրերը, մի ձեռին քուղա, մէջը իւղ, մածուն, արաժան և այլ հեղուկներ ածելու համար, իսկ միւսին՝ մի խոշոր հովական մահակ, — բոշաների միակ զէնքը գիւղական կատաղի շների և երեխաների դէմ, որոնք հաւասարապէս հալածում ու չարչարում են նոցա: Անքան բեռը գեռ բաւական չէ, որ նոքա պարտաւոր են օրերով շրջելու. յաճախ զորա վերայ աւելանում են և չորս-հինգ հատ մազեր, գիւղացիներին ծա-

խելու համար, իսկ թելն ու կծիկը, երբ երկար ճանապարհ գնալիս մահակը բանեցնելու առիթ չի լինում, բոշա կնոջ ձեռքից համարեա վայր չի լնինում։

Նա շարունակ կամ նորոգում է հնոտի գուղաներ, կամ նորն է գործում։ Հետաքրքրաշարժէ նորա շրջակագայութիւնը մանաւանդ այն ժամանակ, երբ դա լինում է ընտանիքով, կամ խմբովին։ Այդպիսի խմբովին շրջակայութիւն բոշաները յանձն են առնում այն ժամանակ, երբ մի գաւառում այլ ևս տեղ մնացած չի լինում, որը այցելած չը լինեն. այնուհետև նոքա խմբով անցնում են մի այլ գաւառ կամ նահանգ, տեղաւորւում են մի կենտրոնական տեղ և, եթէ կարելի է այսպէս ասել, բաց են թողնում իրանց ասպատակ կանանց շրջակայքը կողոպտելու։ Այդպիսի տեղափոխութիւնների ժամանակ, ահա կը տեսնէք բոշա-կնոջ բազմած մի աւանակի վերայ, առաջեւը դրած մի երեխաց, յետևից մի ուրիշը, մէկն էլ կախած խուրջինի մի աչքից, միւս կողքից էլ քաշ արած մաղեր կամ տոպրակներ, ինքը հանդիսա մանում կամ գործում է, իսկ այրը ահագին մահակով առաջ է վարում հնազանդ անսունին։ Այսպէս մի քանի ընտանիք գնում են խառն ի խուռն առանց որ և է կարգ ու կանոնի, իջնում են մի զիւզ, որտեղ տղամարդիկ պարապում են երեխաներ պահելով, որոնց մասին ի հարկէ եթէ նայելու լինենք բոշայի աչքով, շատ չնչին հոգատարութիւն է հարկաւոր, արածացնում են իրանց բեռնակիր անսառունները, մաղեր են գործում, իսկ կանայք, ինչպէս ասացինք, գնում են շրջելու.—«կովի պէս կաթ ժողովելու, որ զան իրիկունը կթւենա, ինչպէս սովոր է ասելու այր բոշան իւր աշխատասէր կնոջ մասին։ Այդպիսի առժամանակեայ բանակներում բոշաները հաւաքում են մածուն սերուցք, կաթ և այլ բաներ, զոցանից շինում են իւղ, պանիր, ծախում և կամ տանում են իրանց տները։ Իսկ հաւաքած հացը, ալիւրը և այլ անհրաժեշտ պաշարեղէնները նոքա բոլորովին չեն ծախում, այլ մթերում են իրեւ ձմեռայ պաշար։

Որովհետև այժմս բոշա-հասարակութիւնը կիսովին հասառատարնակ է դարձել, այդպիսի խմբովին շրջակայութիւնը ներկայում և հազւադէպ է լինում։ Հեռաւոր տեղեր շրջողը միայնակ բոշա-կինն է լինում, որը երբեմն ամիսներով հեռանում է տանից։

Այսպէս օրինակի համար Ախալքալաքի բոշաները ոտի տակ տարով Ախալքալաքի, Ախալցխայի, Աղքսանդրապոլի գաւառները, անցնում են նաև Թիֆլիս, Թելաւ, Սղնախ, երբեմն նաև աւելի հեռու, բոլոր ժամանակ ոտով շրջելով։

Զը նայելով այդ երկարատև բացակայութեան և այն բազմաթիւ աննպաստ հանգամանքներին, որոնց շնորհիւ մի այլ կին ակամայ բարոյական անկման պիտի դիմէ, բոշա կինը անցնում է բոլոր պատահած խոչնդոտները անձնավտահ ամեն տեղ ցոյց տալով իւր ցեղի ամենամեծ առաքինութիւններից մինը՝ իւր զարմանալի բարոյականութիւնը։

Յօդւածիս սահմանից դուրս լինելով բոշա կանանց մղած հերսուական կոխւների նկարագիրը, իրանց պարկեշտութիւնը պահպանելու համար, որ իբր բարոյական խրատ պատմում է ժողովրդի բերանում, մենք հարեւանցօրէն ենք անցնում այս աչքի ընկնող առաւելութիւնը, որից համարեա զուրկ են միւս թափառաշրջիկ գնչուների կանայք։ Այս պատճառով զուր չէ այր-բոշայի այն մեծ վատահութիւնը, որ նա ազատ թողնելով իւր կնոջը առանց տղամարդու առաջնորդութեան և հսկողութեան հեռաւոր երկիրներ, միանգամայն հաւատացած է, թէ քանի չէ լրել իւր կնոջ բերանում նրա սուտ ու կծու լեզուն, որ կարիճի նման խայթել և օձի նման թունաւորել գիտէ, և քանի որ շարժում է նրա ձեռքում հաւատարիմ մահակը, իւր պատիւը արատաւորւած չէ։

Ասացինք, որ բոշան զող չէ։ Դա պէտք էր մասնաւորել բոշակնոջ վերաբերութեամբ, որովհետեւ նոցա տղամարդոց վերաց դէթ նկատած է մի շնչին, շատ սոլորական և միմիայն բոշա-տղամարդոց առանձնայատուկ զողութիւն։ սոքա խիստ վարպետութեամբ կտրուում են ձիերի աղիները նրանցից մաղեր պատրաստելու համար։ Բայց բոշա-կանանց յիրաւի ոչ ոք չի կարող մեղադրել զողութեան մէջ։ Այդպիսի մի կիսավայրենի ժողովրդի մէջ, իրաւամբ զարմանալի է այդչափ գովելի յատկութիւններ տեսնելը, որոնց կարող են շատ քաղաքակիրթ ազգեր ևս նախանձել։ Ամենի դուռը բաց է բոշայի առաջ։ ամեն տեղ նա մտնում է անխտիր, շատ անգամ, մանաւանդ ամառ ժամանակ, երբ գիւղացիները դաշտումն են լինում կամ կալումը, նա ոչ ոք չի գտնում տանը, ուրեմն կարող

է վերցնել ինչ որ ցանկաց բացց նա մնում է հաւատարիմ իւր աւանդական սովորութեանը: «Ո՞ինչ չը վերցնել սեփական ձեռքով»— թէև դա տիրոջ թուլատրութեաբ լինի, այս է պատւիրում նորա ցեղական պատւերը, որ դարերով սրբագործած, խիստ օրէնքի նշանակութիւն է ստացել բոշալի աշքում և որի զանցառութիւնը աններելի մեջք է համարւում նորա համար: Խոշան երբէք անմիջապէս չի վերցնիլ իւր ուղածը, այլ դա միշտ կատարւում է միջնորդաբար, տան մի անդամի ձեռքով, որ տւողին «ողորմութիւն» համարւի, իսկ ստացողին, «հալալ» լինի: Երբ տանտիկինը զբաղւած է, բոշան սպասում է մինչև նորա գործի վերջանալը և ապա ստանալով իւր բաժինը, հեռանում է: Մտնելով մարդ չեղած տուն. նա մի քանի անգամ կանչում է տանտիկինը և երբ նա չի երեսում՝ անմիջապէս հեռանում է:

Նկատւած է, որ բոշան կը խարի. բայց չի գողանալ. պէտք է ասել, որ բոշաները սովորութիւն ունեն երերմն հետները ման ածել վատ տանձ, խնձոր կամ այլ մրգեղին, առաւելապէս դոշաբ, որնկը դարձեալ ձրի հաւաքած են լինում այլ տեղերից և այդ մրգեղինով յաճախ խարում են երեխաներին, երբ մեծերը տանը չեն և նոցա ձեռքով տանից ցանկացած բանը վերցնում են: Ի հարկէ երբ մեծերը վրայ հասնեն, բոշան արդարանալու միջոց կ'ունենայ թէ, ինքը չի վերցրել իւր ձեռքով, այսինքն չի գողացել, այլ երեխան է նրան տւել:

Երջելով երկրէ երկիր, գործ ունենալով ամեն տեսակ մարդոց և ժողովրդի հետ, ել ու մուտ ունենալով ամեն տան և հասարակութեան մէջ, բոշա կանացք ձեռք են բերում զարմանալի գործնական սրամոտութիւն, որ առակ է դարձած ժողովրդի մէջ: Այդ է պատճառը, որ շատերը հետամուտ են լինում բոշաներին հարցերով՝ նրանցից ծաղրաշարժ և սրամիտ պատասխաններ տանալու համար: Եւ ոչ մի խօսք, ոչ մի ակնարկ, ոչ մի հեղնական հարցմունք անպատճախան չի մնում բոշա կնոջ կողմից: Արամառութիւնների իւր անսպասելի բառարանից իւրաքանչիւր հարցմունքի կամ ակնարկի փոխանակ՝ նա տալիս է խիստ շուտափոյթ, սրամիտ և կծող պատասխաններ: Այնպիսի հանգամանքներում երբ լիրբ աղամարդիկ նորա հասցէն արատաւոր և անառակ սրախօսութիւններ

են ուղարկում, բոշան ոչ ամաչում է և ոչ էլ վախենում է հապճեակ և յարմարաւոր պատասխաններ տալուց։ Այդ սրախօսութիւնները սովորաբար արաւայտում են քողարկած, փոխարերական մաքերով, որոնք արտաքուստ վիրաւորիչ չեն երեւում։ Դորանով բոշան ազատում է շատ անախորժութիւններից, որովհետեւ մինչեւ հակառակորդը հասկանայ բոշի երկդիմի պատասխանի իմաստը, բոշան արդէն հեռացած լինելու միջոց գտած կը լինի։ Երբ բանը բացարձակ կռւի է հասել, այդպիսի նեղ հանդամանքներում նա էդ առիւծի արիւութեամբ թէ խօսքով և թէ գործով գիտէ պաշտպանել իւր պատահւը։

Երեւի այդպիսի շուտափոյթ և սրամիտ պատասխան տալն է պատճառ եղել այն ասացւածքի կազմւելուն, որ ժողովուրդը գործածում է հապճեակ պատասխանող անձանց համար թէ՝ «բոշի պէս խօսքը ճեպնէ» (բոշի նման պատասխանը պատրաստ գրապանումն է)։ Լաւ հայհոյելուց, շուտ, սրամիտ պատասխան տալուց զատ, բոշան մանաւանդ լաւ անիծել զիտէ զիւղացի չարաճճի երեխանների զէմ, որոնք խմբերով քարկոծում են նոցա. այդ անէծքը միակ զէնքն է։ Բոշայի ազբիւրի նման առատարուզի բերանից դուրս հոսող հարուստ, բազմասեսակ անէծքը բառերով անհնարին է նկարագրել, դորա մասին լիովին գաղափար կազմելու համար պէտք է անձամբ լսել և զարմանալ։

III

Գանք այժմ այր բոշային։ Նա իւր դանդաղաշարժ և անդործ կեանքի մեծագոյն մասը հին խրձիթի ծածկոյթի տակն է անցկացնում։ Նա մասնակից չէ իւր անխոնջ, մշտապէս թափառող կնոջ ոչ աստանդական կեանքին ամբողջապէս, ոչ չարչարանքներին և ոչ էլ նորա ամենօրեայ զրկանքներին։

Այր-բոշան իւր ջանասէր կնոջ աշխատանքի արդինքի անհոգ վայելողն է։ նորա վաստակի պտղի տէրն ու ճաշակողն է։ Խնչպէս մի արևելցու ճշգրիտ պատկեր, նա իւր ընտանեկան պէտքերի մեծագոյն մասի հոգացողութիւնը զցելով կնոջ վերայ, ինքը հանդարտութեամբ կլանում է չարչարանքի արդիւնքը առանց խնայելու։

Բոշա կինը իւր հաւաքածի տէրը և գործադրողը չէ, նա իւր քաղցը միշտ դուրսը, օտարների տանն է յագեցնում, մինչ իւր շպուտ-պուտ հաւաքած կաթը, մածունը և կամ իւղը անցնում է իւր մարդու ձեռքը, որի տէրը, գործադրողը կամ ծախսարարն է համարւում նա: Խնչպէս խելքին փչեց այնպէս էլ կարող է վարւել նա այդ ապրանքի հետ. կարող է ծախել և ծխախոտի կամ արագի տալ, այդ նորա ցանկութիւնից է կախւած:

Բոշայի սրբաննշները և ձգտումները չափազանց սահմանափակ լինելով, նա զերծ է մասցել նոցա անձնատուր լինելու ցանկութիւնից, որոնք յաճախ դէպի շռայլութիւն և ապականութիւնն են տանում մարդոց: Նորա շռայլութեան միակ առարկաներն են էժանազին ծխախոտը և օղին են, մանաւանդ վերջինը, որ առանց բացառութեան խիստ սիրելի է բոշաներին: Առանց տատանւելու կարելի է ասել, որ արբեցողութիւնը բոշաների համար հասարակային ախտ է զարձել: Դոցանից զատ այր-բոշան ուրիշ շռայլութիւններ չունի: Նորա ամբողջ կեցութիւնը պարզ, նոյն իսկ աղքատիկ կերպարանք է կրում: Նորա հազուսաը իսկ և իսկ համապատասխանում է իւր դրութեանը. արխալուխը ծածկւած անթիւ կարկատաններով, շալեղէն չուխան և շալւարը պարզապէս վկայ են մեր ասածին: Ներկայումն թէեւ կան բոշաներ, որոնք տնտեսապէս կատարեալ ապահով դրութեան մէջ լինելուց զատ, շահով փող էլ ունին, բայց երբէք նոցանից ոչ մինը չի ցանկանում իւր աղքատիկ հաղուստը փոխել մի քիչ թէ շատ մաքուր և կոկիկ հագուստի հետ. Բոշան իւր բոյոր հարստաթեան մէջ յաւխտենական աղքատ է մնում ամբողջովին, ոչ մի տնտեսական ապահովութիւն նորա ապրուստը մազաշափ չի փոխիլ:

Նա պարապ ժամերը անց է կացնում իւր հասակակիցների հետ այս կամ այն խրճմում նստած խօսելով և ծխելով: Իրանց թափառական կեանքի արկածները, այս ու այն երկրում, այս ու այն ազգի մօտ տեսածներն ու լսածները իրանց կանանց հազորդած պատմութիւններն ու գէպքերը բոշաների խօսակցութեան անսպառելի աղբիւրներն են: Այդ խօսակցութիւնների ժամանակ մեծ զեր են խաղում բոշա-ժողովրդական երգիւները, որոնք անթիւ առակների, հանելուկների, երգերի և մանաւանդ գովական հէքիաթների:

անպասելի պաշար ունեն ժողովրդին զւարճացնելու համար; Եւ այլ բոշան զւարճանում է. ոչ մի հոգս, ոչ մի աշխարհային մտածմունք չեն վրդովում նորա հոգու անդորրութիւնը; Հասկանալի է կարծեմ; որ նորա նիւթական և բարոյական պահանջների խիստ սահմանափակ քանակութիւնով կարելի է բացատրել նորա անհոգ և մշտադրած կեանքը:

Արդարատ լինելու համար չը մոռանանք ասելու, որ այլ բոշան, ուրիշ ժողովրդի հետ համեմատելով ինչքան էլ ծովը, անդործ անւանելը նորան իրաւացի համարենք, այնուամենայնիւ նաև իւր պարապմունքը, իւր գործը, իւր հոգսն ունի որքան էլ այդ պարապմունքը չափազանց չնշին լինի: Եւ անկարելի էլ է երեւակայել մի մարդ, որ ամբողջ օրը ձեռքերը ծալած, պարապ նստած լինի:

Ինչպէս տեսանք այլ բոշան իւր բոլոր պարտականութիւնները ծանրաբեռնել է իւր կնոջ վերայ, որի բացակայութեան միջոցին ինքն է կատարում տան գործերը, երբ տանը մի ուրիշ կին չկայ: Նա կնոջ պէս տանը նստած, հսկելով և խնառելով իւր երեխաններին, մեծ մասամբ պարապում է բոշաների ժառանգական և բացառապէս նրանց յատուկ արհեստով—մազագործութիւնով, որը չափազանց դիւրին, ոչ մի մասւոր աշխոյժ չը պահանջող և միայն կնոջ վայել ու նոցա թովը ձեռներին մատչելի կործ է: Բոշան խիստ պարծենում է իւր այդ արհեստով. նոցանից ոմանք, իրանց ըմաքրիչ են անւանում այն պատճառով, որ հասարակաց հացը մաքրելու գործիքը—մազը նոքա են մատակարարում: «Մեզ ոչ թէ բոշա՝ այլ մաքրիչ պիտի անւանէք» ասում են բոշաներից առաւել պատշաճները, որոնք հասկանում են բոշա անւան ոչ այնքան համակրելի նշանակութիւնը: Բացի մազերից, որ պատրաստում են ձիու պոչի մազերից, և որոնց ծախողը, ինչպէս տեսանք, դարձեալ նոցականայքին, բոշաները շինում են երեխայական թմբուկներ, տափեր, որոնց փոխարինում են իրանց պէտքական բերքերի հետ: Մի քանի տեղերի բոշաները, ինչպէս օրինակի համար Սինոպի և առհասարակ Անատոլիայի բոշաները, պարապում են դարբնութիւնով ևս, աւելի լաւ կը լինէր ասել նալբանդութիւնով և երկաթեայ մանր իրերի նորոգութիւնով: Բոշան ոչ միջոց և ոչ էլ ցանկութիւն ունի կատարեալ դարրին լինելու, որ մեծ ջանք և խիստ աշխատութիւն է

պահանջում, և որի պարագաները պիտի ներսան ստիլեն մշտակեաց լինելու։ Նա պայտառմ է իւր աւանակը, եթէ պատահի նաև իւր դրացունը և օտարինը, նորոգում է հին դանակ, մանգաղ կամ գերանդի, հաւաքած երկաթի կտորանքից շինում է մեխեր կամ պայտեր, անա այդ է նորա դարբնութեան ծայրը։ Այժմ սակաւադէս արհեստի դիմող բոշաները սովորում են հասարակ ստնամաններ կարել (ոչ կոշկակարութիւն), որ դարձեալ չի պահանջում առանձին խելք կամ ոյժ։

Խոշպէս ընթերցողը կը նկատի, մեր թւած պարապմունքների մէջ, որոնցով զբաղւում է այր բոշան։ (որսնց հազիւ թէ կարելի լինի արհեստ անունը տալ), ոչ մի արհեստ չկայ որը քիչ թէ շատ մտաւոր կորով, կամ ֆիզիքական ոյժ պահանջէր Բոշայի ընտրածը բոլոր արհեստներից ամենաղիւրինը, ամենաքիչ մտաւոր կամ ֆիզիքական ոյժ պահանջողներն են, որոնք կան և միշտ մնում են նոյնը նորա ձեռքում առանց յառաջադիմելու, միշտ կանգնած, ինչպէս որ մշտապէս կանգնած և անփոփոխ է մնում ինքը բոշաժողովուրդը։

Բոշան միշտ խուսափում է այն բոլոր բաներից, որը պահանջում է խելք, մտածողութիւն, կամ ֆիզիքական ոյժ, աշխատանք, ճակատի քրտինք։ Ի հարկէ դրականապէս չի կարելի ասել, թէ բոշան անընդունակ է որ և է ֆիզիքական կամ մտաւոր աշխատանքի և յառաջադիմութեան՝ թէև փաստերը այցպէս են թելադրում եղբակացնելու. այգանը միայն կարելի է ասել, որ բոշայի թէ մտաւոր և թէ ֆիզիքական ոյժերի դարևոր անգործադրութիւնը, ձրի ասպրուստի հնարաւորութիւնը սաստիկ խոպանացրել են բոշայի մէջ այն ոյժերը, որոնցով ապրում է իւրաքանչիւր անհատ, որ ընդունակ է աշխատելու։

Միակ պարապմունքը, որտեղ քիչ թէ շատ փայլում է բոշայի մտաւոր ընդունակութիւնը, որտեղ արտայայտում է նորա խելքի արդիւնքը, նորա աշխարհահայեցողութիւնը և զգացմունքները, նորա ճարտարութիւնն և սրամտութիւնը, մի խօսքով նորա հոգեկան, մտաւոր կեանքը ամբողջովին, դա աշուղութիւնն է, որ ի նպաստ բոշաների, նոցա մէջ շատ ապրածւած է, Բոշաների մէջ կան ընտիր ժողովրդական երգիչներ, որոնք նոյն խսկ հայերի մէջ

մեծ հայրաւ են վայելում ոչ այնքան իրանց ինքնուրոյն ստեղծագործութիւնով, որքան իրանց ծիծաղաշարժ սրամութիւնով։ Նոքա երգում են բոշայերէն (յօդւածիս վերջում իրրե նմուշ զնում եմ մի քանի տուն նոցա երգերից), հայերէն, բաց առաւելապէս թուրքերէն։ Բոշա-երգիները լու հեքիաթներ ասողներ են։ Նոքա ձմերային երկար գիշերները իրանց վառվառն հեքիաթներով զբաղեցնում են բազմաթիւ դիւզայիների, որոնցից իրրև վարձ որոշեալ քանակութեամբ ցորեն կամ զարի են առանում։ Հարսանիքների, տօների, հասարակաց խաղերի և զւարճութիւնների ժամանակ այդ երգիները թէ բոշաների և թէ հայերի մէջ անհրաժեշտ մասնակցողներ են։

IV

Զարմանալի է բոշաների անուսումնասիրութիւնը։ Նոցանից ամանք ապրելով քաղաքներում, իրանց կրօնակից հայերի հետ, շատ սակաւ է պատահում որ երեխաներին ուղարկեն նոցա ուսումնարանը ուսանելու։ Նոքա չեն ուղում հետեւ այն ազգին, որի անդամն են համարում իրանք իրանց։ Մի քանի տարի առաջ երկու թէ երկք բոշա երեխայք միայն կային Ավալքալաքի հայոց ուսումնարանում, որնիք չը վերջացրած դուրս զնացին, առաջին և վերջին ուսանող սերունդը դառնալով բոշաների մէջ։ Նոցա այդ անուսումնասիրութիւնը առիթ է տւել իրաւամբ այն առածի կազմելուն թէ քրուրդուն փաշա, բոշատէն քեշի օլմազ (բրդից փաշա, բոշայից քահանայ չի լինի)։

Բոշան ձգուում չունի նոր բան սովորելու, գուցէ նա անընդունակ էլ է նորը, լաւը ըմբռնելու, հասկանալու։ մանաւանդ այս կարծիքը պէտք է ընդհանրացնել այր-բոշայի վերաբերութեամբ, որ ամեն բանով յետ է իւր կնոջից։ Բոշան մի մանուկ է, մի երեխայ, մանկան բոլոր թուլութիւններով։ Սակայն նա մանկան հետաքրքրելու և շանալու յատկութիւններից զուրկ է։ Այդ այդպէս լինելով, քնական է, որ բոշան մարդկային յառաջադիմութեան փայլուն առաւելութեան արժեքը ոչ հասկանում է, ոչ էլ հետաքրքրելում է հանալու։ ուստի և նա կանդնած է միշտ միւնոյն աստիճանի վերայ

և կարծես թէ ոչ մի ձգտում չունի այդ ստոր աստիճանից բարձրանալու, գէթ տեսնելու համար, թէ ինչ է կատարւում իւր շուրջը, թէն, աւելացնենք, նորա մտաւոր կարողութիւններն էլ դրան հասնելու շանսեր չեն ներկայացնում:

Բաւականանալով իւր կնոջ հաւաքած հացի փշանքներով, որ խիստ սակաւապետութեան, համարեա աղքատութեան է հասնում, բոշան զերծ չէ ինքնագոն հպարտութիւնից: Նա իւր շրջակալքի, իւր աշքին երևացող հարստութեան, բարեկեցութեան և փառայեղութեան վերայ նայում է դեւրիշի արհամարանքով: Նա երեխայի պարզութեամբ նայում է իւր շուրջը և կարծես չի տեսնում կամ հասկանում ինչ որ կատարւում է այն երկիրներում, այն ժողովրդոց մէջ, որոնց յաճախ նա ացելութեան է զնում: Մի անգամ անցկացած անմատչելի սարը՝ նա միւս անգամ տեսնում է իւր առաջը հարբած, դիւրամատչելի ճանապարհ: մի անգամ գնացած հասարակ ուղին դարձել է սլաքնաց երկաթուղի: իւր հարեւանի խրճիթը, բարձրացել, դարձել է երեք-չորս յարկանի փառաւոր պալատ, նայում է այդ ամենի վրայ բոշան և կարծես չի տեսնում, ականջին է հասնում այդ դպրութիւնը, որ անընդհատ առաջ գնացող կեանքի նշանն է պարունակում և կարծես չի լսում: Այդ բոլորը նորան երևում է ինչպէս մի երազական երևոյթ, անհասկանալի մարդկային սատանայութեան մի արդիւնք: նայում է նա այդ բոլորի վերայ և, զարմանալու տեղ, կարծես արհամարհանքով կրինում է: Հաշմատեցէք, չարչարեցէք, զուր ջանք, անօգուտ վաստակ, եւ կամ և մնում եմ նոյնը, դուք ձեր ցանկութիւններին յագեցում չէք կարող տալ, իսկ ես կապրեմ հանգիստ ու անդորրա: Իոշան արհամարհում է լուսաւորութիւնը, որովհետեւ նրանից շատ յեա մնացած լինելով, նորան ըմբռնել չը կարողանալու ց զատ, նա կատարելապէս զգում է թէ լուսաւորութիւնը իւր թշնամին է: Լուսաւորութեան մէջ նա իւր ապրուսոի կարստեան նշոյներն է տեսնում: այս պատճառով նա խուսափում է այն ամենից ինչ որ լուսաւորութեան հետքեր է կրում: նա որոնում է նահապետական քնով քնած ժողովուրդ, հեռաւոր, դժւար մատչելի խորշեր, որտեղից նա կարող է ճարել իւր ապրուսու:

Փորձեցէք մոնել մի բոշայի խրճիթ կամ հարցրէք նորա

կեանքից, նորա լեզւից տեղեկութիւններ, աշխատեցէք իմանալ նորա դրութեան մանրամասնութիւնները,—այդ անկարելի, եթէ չ'ասենք անհնարին է: Քո շեապդ նորան երկիւղ է ազգում, խոռամանկութեամբ նա քո առաջը կը քծնի, իւր կեանքի մուր կողմբը արեւստութեամբ նա կ'աշխատի ծածկել, քեզ կ'աղաչի, որ աշխատէք նորա համար հող ձեռք բերել, նա չունի, թէ չէ ինչպիսի ուրախութեամբ նա երկրագործութիւնով կը պարապի թօղնելով իւր զգւելի զբաղմունքը, կը խեղճանաչ, կը ստորաց նա. բայց երեսներդ դարձնէք թէ չէ նա ձեր յետեկից իւր լեզուն կը հանէ: Բոշան միայն խարել գիտէ, նա արհամարհում է ամեն մի պարապմունքը, դոցա թւում և առաւել սաստիկ այն մարդու պարապմունքը, առանց որին նա ազրել չի կարող: «Աղքատ ու հպարտ» ահա բոշայի յատկանիշ կողմը, որը իւր ծագման վերաց նայում է ճիշտ այն հայեացքով, ինչ հայեացքով ազնւականը նայում է իւր հին տոհմական ծագման վերաց. ուստի ամեն մի պարապմունքը որ բոշայութիւն չէ, անարգելի, ստոր, պարսաւելի է բոշայի համար: «Իմանաս սալի զոգոսց, չիմանաս իշու զոգոսց, ահա այն ամենախիստ անէծքը, որ կարող է մի բոշա մի ուրիշ բոշայի տալ: «Իմանաս սալի (սալի) զոգոսց», կը նշանակէ գիւղացի, երկրագործ դաւնաս, քո պարապմունքդ եզներ և սալլ լինի, քո լածդդ սալլի ճռինչը լինի, որ միայն պարսաւելի, արհամարհանքի արժանի ռամկին է արժանի և ոչ թէ մի ազնւիկ բոշայի: Դու գիւղացի դառնաս, անազատ, սալլի միայն քաշ եկող, նորա անիւներից բարձրացած փոշին ծծող և ոչ թէ մի ազատակամ բոշա, որ գիւղացու նման չարչարանքով չի վաստակում իւր հացը, որի ականջին սալլի անախորժ ճռնչոցի փոխանակ համնում է միայն իշուկի ։ ճարդոսի նւիրական, բոշայի համար խիստ քաղցր, շատ դուրեկան ձայնը: Ահա թէ ուր է հասնում բոշայի տածած արհամարհանքը դէպի երկրագործութիւնը և նորա ունեցած կարծիքը իւր պարապմունքի մասին: Բոշայի համար մի առաւել մեծ զժքաղդութիւն ըս կաց իւր իշու, իւր պատական ճնարդոսի զոգոսցից զիւելուց աւելի, ուստի վերոյիշեալ բնորոշ անէծքը այդ ամենախիստ, բոշայի անբաղդութեան ամենաարմատական կէտն է ընարում նորա վերաց ազդելու համար: Էշը, եթէ կարելի է այսպէս ասել,

բոշայութեան սիմբոլն է. իւր ամբողջ կեանքը, իւր բոլոր էութիւնը կապւած է այդ խռնարհ անսառւնի հետ, ինչպէս գիւղացու կեանքը կապւած է հողի հետ. ուստի այդ կենդանին, որից զատ ուրիշ ոչ մի կենդանի չի պահում բոշան, նորա ընտանիքի մէջ մի խսկական անդամի տեղ է բռնում:

Նա իւր իշուն պահում է և խնամում է իւր որդուց աւելի,
նորան տալիս է այնպիսի քնքոյց, սիրելի ածականներ, որ իւր կնոջն
էլ չի տալ. «Ճաղիկ, նարդոս, թումբուլ, մարալ ընտանի» (Վերջինը
կոչ համար ևս գործածելի է) և այլն և այլն սովորական անուն-
ներն են, որոնք բոշան տալիս է իւր սիրելի աւանակին և որից
զրկելը բոշակի համար աշխարհիս ամենամեծ չարիքն է համարում նա:

(ԱՆԳՐԻ ՄԻԱ անգամ)